

ՀԻՉՈՐՈՒՆԵՐԻՆ

Զաղաքային «Կոմալրի» օրաթերթի հավելված

1991 թ. փետրվար, № 12: Գինը՝ 50 կոպ.



Ն. Ի. Ռիմկովը և Ս. Գ. Հարությունյանը աղետի վայրերում էին առաջին իսկ օրերից:

Ռեպորտաժ՝ արցունքով ու հ ու լ յ ո ս ո վ

Երկրաշարժի գործած ափսոսալից փոփոխությունների մասին ուղիղ լուրերը տակնուվրա արեց բոլորիս հոգիները: Բայց մեղանից և ոչ ոք, հավանաբար, չէր պատկերացնում աննախադեպ արհավիրքի չափերը:

Այդ օրը՝ դեկտեմբերի 7-ի երկկոյան, երբ լրագրողների մեր խումբը մտավ Լեհինական, իր առջև տեսավ ահաարարուն մի տեսարան. ծաղկուն ու բարետես, ծիծղուն սստանի փոխարեն ամենուր փլատակներ էին, փլատակներ...

Այս ր՞նչ շարագույժ նախահնամություն է վիճակված քաղաքին. տարեց-

ները գեռ լավ են հիշում 1926 թվականի մեծ արհավիրքը, երբ երկրաշարժը կործանեց այն ժամանակ մեկ-երկու հարկանի Գյումրին:

Անհավատալի էր, սահմրուկեցնող, փլատակների միջից լավում էին ծանր սներոցներ, օգնություն աղերսող կանչեր: Գիշերային խավարի մեջ փլված շենքերի կույտերի մոտ խարույկներ էին կայծկրտում, որոնց շուրջ բոլորը խմբված, հրաշքով փրկված անօթևան մարդիկ անել


(Շարունակությունը՝ 3-րդ էջում)



Գուլպեղենի ա/մ գործող-թողարկող սրտադրամասի փլատակները...

Լուսանկարը՝ ՀՎ. Կարապետյանի

ԴԵԿՏԵՄԲԵՐԵԱՆ ԱՐՀԱՎԻՐԲԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ



Քաղաքի մուտքը Երևանի փողոցից (դեկտեմբեր, 1988 թ.):



Լեհիմանի մարզադաշտում: Տար ճաշը անհրաժեշտություն էր (18-ը դեկտեմբերի, 1988 թ.):



Կոմի ԻՍՍՀ-ի շինարարները գիտեին, որ այստեղ հանդիպելու են նաև կրեյսներին...
Լուսանկարները՝ Վ. Կոտովի

ԼԵՆՎԵԼ ՀՈՎԱԿԻՄԻ ԲՈՉԱՐՅԱՆ

Երկրաշարժով պատուհասված մասը Լենվել Հովակիմի Բոչարյանին գտավ 80 տարեկան հասակում: Փայլուն գիտելիքներով էր ավարտել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզիկա մաթեմատիկական ֆակուլտետը: Կրթչի երիտասարդական տարիներին աշխատել է Կումարիի դպրոցներում, դա ավանդելով մաթեմատիկա և ֆիզիկա՝ խոր գիտելիքներ տալով մատաղ սերնդին: Ապա երկար տարիներ հանդիպացել է Լարիբջանյանի անվան դրպրոցի տնօրենը, իր հարուստ գիտելիքներն ու մանկավարժական փորձը հաղորդելով դրպրոցական գործի նվիրյալներին: Աշխատել է նաև կոլտուրայի բաժնի վարիչ: Բայց էությունը, ամեն ինչով փրիտիա էր, գիտությունների թեկնածու: Վերջին 10 տարում աշխատեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի քաղաքացին մասնագետույում, փիլի-



սոփայության և գիտկոմունիզմի ամբիոնի վարիչ, դասախոս, դոցենտ: Լ. Բոչարյանը հարգված ու սիրված հայր էր, ամուսին, հասելի անձնավորություն ընկերների շրջանում: Խորը փիլիսոփա էր և ուներ բարձր ինտելեկտ: Նա կողմնակից էր անկախ Հայաստանի ստեղծմանը, կրթչի դեմոկրատացմանը, որը, ավագ, նա չտեսավ: Արցախյան շարժման ակտիվ մասնակից էր: Բազմիցս ելույթներ էր ունենում Ազատության հրապարակում: ԱՆԱՀԻՏ ԲՈՉԱՐՅԱՆ



ՍԱՄՎԵԼ ԳԵՐԱՍԻՄԻ ԲԵԿՋԱՆՅԱՆ (1954—1988)

Հուշաքարից ընդամենը այսքանն է գրված: Սակայն, երբ ամենակարող մի ձեռք կարողանա հրաշքով բացել հարազատներից, բարեկամներից ու ընկերներից սրբտեղը, այնտեղ այնքան բան կկարգա, որ գուցե կորցնի բանականությունը: Բա կարճ, դժվարին կյանքը նվիրում էր: Նվիրում՝ ընկերներից, բարեկամներից, ծանոթ-անծանոթների: Եստ ղեպքերում անում էիր

անհնարինը շահնկալիով փոխադարձ ոչինչ— Բա մարդը ինչի՞ համար է ապրում,—ասում էիր ու մղուտում: Ու բարոյությունը, անկեղծությունն էր կաթում աչքերից: Սանք էիր տանում յուրաքանչյուր անարդարություն՝ քո հանգեպ լինելը, թե օտարի, և փորձում էիր... Միշտ չէ, որ գա քեզ հաշտվում էր, չէ որ անարդարությունը կա անսահման է...

Քա կնրճ կյանքում գործած միակ սխալը՝ մահճ եղավ: Անհեթեթ ու գավազիր մահը: Մինչև այսօր էլ չենք հաշտվում քո սղավաճանությունն հետ, դրա իրավունքը դու ուղղակի չուներ: Սակայն միայն մի հույս, մի աղաթ հույս կամեղ համար. վաղ թե ուշ մենք բոլորս կհանդիպենք քեզ հետ: Ավագ, ամբողջ արածից համար մենք հատուցում լուսններից ինչպե՞ս հատուցել այն, ինչ լափ կշիռ ու սահման չունի... Է. Ն.

ՌԻՏԱ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԻՆԻՓԱՐՅԱՆ

Ընդամենը 27 գարնան հեք էր զգացել քո աղջկական անմեղ հոգին: Ընդամենը 27 ագամ էր քո հոգին պոռթկացել գարնան զարթոնքից... Բայց որքան սեր, գորովանք, անկատար երազներ կան քո հայացքի ու թախծոտ աչքերի մեջ: ՌԻՏԱ ՄԻՆԻՓԱՐՅԱՆԸ ծնվել է 1961 թվականի մայիսի 17-ին: Սովորել և բարձր ստաջանություններ ավարտել է ՆՊ 16 դպրոցը: Երաժշտական լավագույն ընդունակություններով էր օժտված: Նվագում էր ՆՊ 1 մշակույթի տան ժողգործիչների խմբում: 1979 թվականին ընդունվել է կարի ՆՊ 2 արտատրական միավորումում աշխատանքի, միշտ աչքի է ընկել իր ջանասիրությամբ, աշխատանքիությամբ, արժանացել կոլեկտիվի և դեկալարության խրախուսանքներին: Ամենազավ հատկանիշները նկատեցին ու գնահատեցին:



Ընտրվեց քաղաքային խորհրդի պատգամավոր, սպա և հերթի կոմերիտական քարտուղար: Աղետաբեր դեկտեմբերի 7-ին աշխատատեղում էր, որտեղ և կտրվեց նրա մատաղ կյանքի թելը: Փշովեցին բոլոր երազանքները, սերը ստաղ կյանքի ծարավ նրա աչքերում: Թող Ռիտայի փշոված երազանքները ծարավեն ողջ մնացածների սրտերում:



Մ Ի Ո Ղ Ջ Գ Ե Ր Դ Ա Ս Տ Ա Ն

ես քաղում եմ ձեզ իմ հոգում,

Ռեովենտե դագաղ չկա: Այսօր դագաղ, այսօր հոգում

Ո՞վ հասցնի և ո՞վ սգա: 1988 թ. Սև տարի, սև մնաս: Համարյա կես նշանք ազգովի ԽՆՀ անի ծեր խնդն մայրը, որի 7 զավակներից երեքը զոհվեցին, նաև շորս թոռներին:

ՆՇԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱՐԾՐՈՒՆՑԱՆԸ ծնվել է 1947 թ.: Աշխատում էր Չր կալովի անվան կարի արտադրական միավորումում, որպես մեխանիկ: Սիրված ու հարգված էր կոլեկտիվի և ընկերների շրջանում: Գեղեցիկ, բարեսեռ երիտասարդ էր, համեստ ու ինքնամոքի: Հոգատար հայր էր ու սիրող ամուսին: Մի քի կարելի է մոռանալ նրա վերջին խոսքը՝ փլատակների տակից. «Շուտ արեք, հասեք, խեղդվում եմ...»: Հույս ուներ, որ կրփրկվեր, անընդհատ ծնոթի չհարվածներով ազգանշում էր իր տեղը: Հարազատներով աշխատում, էինք 5 զավակներին կրկին տեսնելու հույսով...

Փլատակների տակ մնաց նաև բույրը՝ ՀՐԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱՐԾՐՈՒՆՑԱՆԸ իր ողջ ընտանիքի հետ: Հրանուշը ծնվել է 1945 թ., ազարտել Կոմայրիի պոլիտեխնիկական ինստիտուտը: Աշխատում էր սառնարանային կոմպրեսորների գործարանում, ինժեներ-կոնստրուկտոր էր: Ապրում էին գույպի

ղենի արտադրական միավորման դիմաց գտնվող 9 հարկանի շենքում: Անմիջապես էր, ուրախ, անկեղծ: Հրանուշի ամուսինը՝ ՌՌԲԵՐՏ ԱՍԱՏՐՅԱՆԸ աշխատում էր գույպայագործների կոլեկտիվում: Հարգված էր ընկերների կողմից: Նվիրված հայր էր իր երեխաների համար: Աղջիկը՝ ՏԻՐՈՒ ՀԻ ԱՍԱՏՐՅԱՆԸ, ծնվել է 1976 թ., սովորում էր № 14 միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանում, ուսման գերազանցիկ էր, սիրում էր կյանքը: Տղան՝ ՏԻԳՐԱՆ ԱՍԱՏՐՅԱՆԸ, ծնվել է 1978-ին, սովորում էր նույն դպրոցի 4-րդ դասարանում, զարձալ գերազանց գնահատականներով: Սիրում էր նկարել, տնային պայմաններում կենդանիներ պահել:

Անմեղ զոհ դարձավ նաև Հրանուշի մյուս բույրը՝ ՄԻՐԱՆՈՒՇ ԱՐԾՐՈՒՆՑԱՆԸ իր միևնույն ուրզու՝ ԳԵՂԱՄ ՍԱՄՎԵԼԻ ԲԱՅԱԹՅԱՆԻ հետ: միասին: Սիրանուշն աշխատում էր հի նրա խանութում, հոգատար մայր էր, բարեխիղճ ու պարտաճանաչ աշխատող, նվիրված իր ընտանիքին: Սիրանուշի գիակը գտնվեց աղետից երկու ամիս անց, անհայտների կողքին թաղված: Գեղամը սովորում էր մորեղբոր ուրզու՝ ԱՐՄԵՆ ՌԱՅԻԿԻ ԱՐԾՐՈՒՆՑԱՆԻ հետ: Արտյոմ Պետրոսյանի անվան դպրոցի 8-րդ «Ա» դասարանում: Երկուսն էլ սովորում էին գերազանց գնահատականներով: Սիրում էին միմյանց և անբաժան ընկերներ էին: Սիրով էին զբաղվում լուսանկարչությամբ:

Վում լուսանկարչությամբ: Լուսանկարում էին գասրեկերներին ու մերձավորներին: Լուսանկարներն այդ չիմա վերածվել են թանկարժեք մասունքների: Նրանց վերջին գասր հայոց լեզվի և գրականության ուսուցչուհու դասն էր, գնահատել էր 5 և 4 գնահատականներով: Երկուսին գտան փլատակների տակ, ձեռք-ձեռքի տղված:

Գեղամի բույրը՝ Նարինե Բայաթյանը գրում է. «Գեղամը սիրված ու խելացի աշակերտ էր, փոքր-ինչ ամաչկոտ: Նրա նկարը 8 տարի չէր իջնում դպրոցի պատվոտախտակից: Ուներ զրոշմանիշերի հարուստ հավաքածու, սիրում էր քիմիա ու ֆիզիկա, գրականություն: Շատ էր սիրում գեղանկարչություն, ծանոթ էր վերածննդի նկարիչների բոլոր գործերին: Գեղեցիկ հոգի ուներ և հիանում էր ամեն մի գեղեցիկով: Ուզում էր ամեն ինչ իմանալ, սովորել: Քիմիայի դասընթացը ինքնուրույնաբար սովորելով, հասել էր 10-րդ դասարանի թեմաներին: Տանը զանազան նյութերով քիմիական փորձեր էր անում: Հաճախ վրան բարկանում էինք, թե կարող ես թունավորվել: Ուզում էր նոր նյութեր հայտնագործել: Տան փոքրն էր և ծնողներս մի առանձնակի գործվածքով էին սիրում նրան: Ամեն ինչի մասնակց գտնում էր: Անգամ պարապում էր բանկետրոլով և մարզիչը նրա հետ լուրջ հույսեր էր կապում: Վազբում միջառ առաջինն էր»:



ԱՐՏՅՈՒ ՌԱՅԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Բագրատ Դարիբջանյանի անվան դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ էր, խոշոր, սևորակ աչքերի մեջ անսովոր մի թախիծ կար թաքնված, մանկական փոքր սրտում՝ բարության անհավատալի պայտը ամբարված: Հարեհաս էր տղան թե՛ շենքի բնակիչներին, թե՛ համադասարանցիներին և անգամ այն անծանոթին, որն օգնության կարիք ուներ:

Հյուրը մարզածին տիրապետում էր հմտորեն: Վրկալությունը՝ այն բազմաթիվ պատվոգրերն ու դիպլոմները, որոնք այսօր նրա օգտագործած իրերի ու լուսանկարի հարևանությամբ մի խաղաղ անկյուն են զբաղեցրել տնակի անկյուններից մեկում, որոնց դիմաց, որպես սուրբ մատուցների, մոմեր են վառվում շուրջօրյա... Սիրված զավակի, լավագույն դասընկերոջ, բարի տղայի հուշը չի խամրի հավիտյան:

ՓԱՌՆԱՎԱՋ ԳԻՆՈՍԻ ԲԱԳՐԱՆՅԱՆ

(Արտյոմի քեռին՝ ծրնված 1954 թվականին) չիմացավ իր սիրելի զարմիկի մահը, բանգի նրան սեփական հարկի տակ թաղեց անողորմ երկրաշարժը: Կինը՝ Ախուրջանի դպրոցի ուսուցչուհի Սուսաննան, որքան էլ մաքառեց, անկարող եղավ դուրս բերել ամուսնուն ու ինքն էլ զրկվեց օտքից: Այժմ երիտասարդ կինն իր անկեղծ մտորումներն անձայն կիսում է սիրասուն ամուսնու հետ, նրան պատմում որբացած զավակների՝ Արաբսյանի ու Կարենի մասին, երազում մանկիկներին տեսնել հարգված ու ճանաչված հորն արժանի հետնորդներ:



ՆԱՌՈՒՆ ԿԱԶԱԳԱՆԻ ՄԿՐՏՅԱՆ

Ծնվել է 1982 թվականին, Լեհիստան քաղաքում: Ըսկըզմակազ կրթությունը ստացել է Միքայել Նալբանդյանի անվան № 11 դպրոցում: Միջնակարգն ավարտելուց հետո ուսանել է հաշվապահական դասընթացներում: Մկրտչյանների ընտանիքի կրտսերն էր և ամենի սիրելին: Համեստ էր ու ինքնամոքի: Սիրում էր կլանքը և

իր ընտանիքը, միակ որդուն, որը ծնվեց 1983 թվականին: Խելոք կին էր և հոգատար մայր, անչափ բարի: Չընապատի, մերձավորների, հարևանների նկատմամբ: Օտա էր անհանգստանում որդու ստոլչության համար, որը տատապում էր մանկական անդամալուծությամբ, հիվանդություն, որ հյուսում էր ոչ միայն որդուն, այլև մորը:

Ձգտումներով լի այս կինը տարերային աղետից մեկ ամիս առաջ աշխատանքի անցավ Սարգիս Լուկաշինի անվան մանկաբույժ ֆարիկայում: Չարագույժ օրը՝ դեկտեմբերի 7-ին, դուրս եկավ տանից, չիմանալով, որ ընտանիքն ու միակ որդուն թողնում է հավիտյան: Թերիկն մնում անթիվ երազանքներ, սպրեյու ու արարելու գեղեցիկ ծրագրեր, մտահրդապումներ:



ՄԱՅՐ ԵՎ ՈՐԳԻ

ԱՆԱՀԻՏ ԵՎ ՀՐԱՅՐ

ՀԱՐՈՅԱՆՆԵՐ

Անահիտ Սերգեյի Հարյանը ծնվել է 1948 թ., սովորել և ավարտել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժինը և աշխատանքի անցել հայրենի բաղարի № 7 միջնակարգ դպրոցում, որպես տնտեսագիտության ուսուցչուհի։ Հիանալի ու հոգատար մայր էր, կոլեկտիվում՝ հարգված ու սիրված անդամ, իսկ աշակերտների համար՝ բարի խորհրդատու, ավագ խնամքի միջոցով, որ միշտ լավ էր ներարկում։ Բուրբիկ հասնում էր, բուրբիկ օգնում և հաճախ կատակով ասում էին ընկերները՝ Անահիտը մեր «շտապ օգնությունն» է։ Այո, բուրբիկ էր օգնության հասնում, բայց ճակատագիրը լինելից նրան էլ և զոհվեց այն ահավոր օրը որդու հետ միասին։

Տղան ՀՐԱՅՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԻ ՀԱՐՈՅԱՆԸ ծնվել է 1972 թ. Անիկանում, մուսուլման ընտանիքում։ Մովորում էր № 23 միջնակարգ դպրոցում, բայց շնագրեց ավարտել այն։ Որոշել էր դպրոցն ավարտելուց հետո բայել իր երկու քույրերի ճանապարհով՝ սովորել տեղի մանկավարժական ինստիտուտի անգլո-ուսական ֆակուլտետում։ Ուշիմ ու լավ աշակերտ էր, մոր գաստիարակոթյամբ միշտ բարին էր կամենում մարդկանց։ Այդ օրը Հրայրը զրպրոցից տուն էր վերադարձել, որտեղ էլ կնքեց իր մահ կանաչուն։ Մայր ու որդի իրար զրկախառնված հեռացան կյանքից։



ԼԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏԻ ՊԵՊԱՆՅԱՆ

1981 թ. ամռան մի պայծառ ու արևոտ օր էր, և այդ օրվա նման գեղեցիկ ծնվեց կենսախինդ Լիանան։ Նա չնայած իր անուկ հասակին, շատ էր զգայուն, սիրում էր կյանքը, ուրախանում ամեն մի մանրուքով։ Հրապուրվում էր ծաղիկներով, հատկապես մախակներով։ Մայրը մի խոր թախիծով է հիշում, թե նա ինչպես էր պատրաստվում դրպրոց գնալ։ Ավել... Դարիքը անցանի անվան (Ն 9) դրպրոցը գնելուց հարձակ անմեղ Լիանայի համար։ Լիանան, փոքրիկ ու սիրուն սղ աղջնակը ինչպես էր արտասանում շիրազյան տողերը... Նա շատ էր սիրում ուսուց լնգվի ուսուցչուհուն՝ Անահիտ Լևոնովնային, որի հետ միասին էլ զոհվեց։ Դեռ չորս տարեկան էր Լիանան, երբ տալեցիները, հատկապես դաշնակաթարոսի մայրը՝ Արմենուհին, Ալատեցից նրա փայլուն երաժշտական ընդունակությունները։

Ամեն անգամ, երբ անցնում են Ն 9 դպրոցի ավերակների մոտով, Լիանայի 4-ամյա նդրայրը՝ Մամիկոնը նայում է մորն ու ասում. «Մայրիկ, գրանցեք Լիանային դպրոցից բերենք, ինչն էլ ենք նրան թողել այնտեղ...»:



ՔԱՄԱՐԱ ԵՐՎԱՆԻ ԴԱՐՍԻՅԱՆ

Սիրելի Քամարա, 22 տարեկան արդեն մայրացել էիր։ Անափ էր ուրախությունը, իրար հերթ էին տալիս երազներին, ծրագրերին, որ թվում էր, թե անկասկած իրականանալու են։ Ետպում էիր՝ երբ ևս տուն գնալու ձեռնարկելու էիր, երբ է փոքրիկ կրիթիկը քնելու իր անկողնում, որ քո ձեռքով էիր կարել, պատրաստել։ Ետպում էիր, բայց... աղետն ավելի առաջ անցավ։ Գու ընդմիջ մնացիր ծննդադարանը քո փոքրիկի հետ։ «Շիրակ» կոմբինատում աշխատող ողջ մնացած քո գործընկերները ցավով ու ափսոսանքով են հիշում քեզ։

ՄԱՅՐԸ ՍՊԱՍՈՒՄ Է...

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԻՐԱՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Նա ուզում էր հայրական տունը նորեն կառուցել, հույս էր տալիս մորը, որ մի քիչ համբերի, կմեծանա... Տոհմաժողովը վերջին արուզովակն էր Հովիկը, նա ժամանակից շուտ էր մեծացել, հայրը մահացել էր ու տան հոգաբարձու իր ուսերին էր տնել։ Մինչև մայրը խոհանոցից թեյ բերեց նրա համար, Հովիկը դպրոցի ճանապարհին էր։ Ընկերներից ցույց էր տալիս իր պատրաստած կրթը



բանջանները։ Արծաթագործություն էր սովորել նավասարդյանից ու իր աշխարհունությամբ զարմացնում էր

վարպետին։ Իսկ պատանին նկարում էր, սովորում էր նկարչական դպրոցում, 2-րդ դասարանում էր։ Բուրբ կան նկարները, արծաթից պատրաստած նրա գործերը, գործիքները, հայրական տունը, որն այդ պես էլ մնաց առանց կտորի... շվա միայն 14 ամյա Հովիկը, որը ծխացնելու էր հայրական տունը։ Մնացին ծոցատետրը, լուսանկարները, որոնք մայրը՝ Սեդան միշտ պահում է սրտի վրա։ Պատիկյանի ժամն էր 8-րդ «Ա»-ում։ Դասն այդպես էլ չավարտվեց...



ԱՐՓԻՆՆ ԱՐՏԱՌԵՆԻ ՀԱԿՈՐՅԱՆ

Մնվել էր 1975 թ. նոյեմբերի 24-ին, սովորում էր № 3 դպրոցի 6-րդ դասարանում, միաժամանակ հաճախում № 3 երաժշտական դպրոց։ Բանաստեղծություններ էր սիրում, հուզված, վերադաժ աշխարհից, ասմունքում էր։ Երբ կմեռնի սիրես ծաղիկ սիրահար, Ոչ մի ծաղիկ Գու չպոկեմ ինձ համար,

Մաղկունեով է կյանքը դառնում գեղեցիկ, Մի նոր վիշտ է ամեն մեղանոց մի ծաղիկ։ Զգեստը և չէր կարող պատկերացնել անգամ, թե իր պես բյուր ծաղիկներ պետք է պոկվեն և անմոռաց վերք թողնեն կենդանի մնացածներին սրտում։ Եվ ամուսնում էր։ Իմ քաղմանը եկեք առանց ծաղիկների, Իմ մարմինը հողին հանձնեմ լուռ ու մուգ։

ՎԱՏԱՌՈՒՄ Է ՏԱՏԻԿԸ

ՓՈՐՔԻԿ ԶԻՎԱՆԻԿԸ

Ախ, Վարդապետ փրկել բալայիս Այդ միտքն հիմա ավելի ծանր է ընչում կուրծքս, բան փուլոված շնքի բարեբր։ Իրար հետ էինք փլատակների տակ։ «Տատիկ, խեղդվում եմ, տատիկ, ջուր եմ ուզում», — ականջիցս, սրտիցս դուրս լին գա

լիս խոսքերդ, բալես։ Վերջին հառաչանքը եղավ՝ մամային եմ ուզում, վերջին թոթովանքը, որ կրծում է սիրտըս, շի թողնում վայրկյան իսկ հանգիստ լինեմ։ Լավն էր իմ Զիվանիկը, աշխույժ, ծիր, խելացի։ Ինձ համար աշխարհում նրանից թանկ ու սիրելի ոչինչ չէր։ Վար, ու Վարդապետ պահպանել նրա մատաղ կյանքը։ Էլ ինչպես ապրեմ։



ՀԱՄԻԿ ԱՐԻՆՔՍԻ ԲԱՐՈՅԱՆ

Ետաշատերի նման կյանքի վառ արշալույսին մայր մտավ Համիկ Բարոյանի կենսատու արևը։ Երաժշտ լույսից կյանքին ինչ հրաժեշտի ժամանակն էր. գրտեղ էր կյանքի ընկերուհուն, ընտանիքի, սուրբ օջախի մասին էր երազում։ Ապրում էր վերածնվող ժողովրդի դարձուցման, վերազարթուցման, Հուլիսիան էր, սիրում ու հարգում էր դիմացիներն, բայց երբեք չէր հապաղում ասել, թեկուզ գաղթը ճշմարտությունը։ Այն քան ազնիվ էր, մաքուր, բյուրեղյա հոգի ուներ, որ



ընկերները առանց նրա չէին պատկերացնում ոչ մի բուպե։ Ոչ մի բուպե... Իսկ արդեն երկրորդ տարին է, ինչ նա չիա ու չիա։ Նեղիր հանգիստ, սիրելի Համիկ, մեներ կազմենք քո հոգու հանգստի համար։ Կա զոթենք ու կողքանք նաև սիրելի փոքրիկի՝ ՄԱՐՏԻՆ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՍՍՀԱԿՅԱՆԻ համար, որ զոհ եղավ նույն օրը։ Սովորում էր 15-րդ դպրոցում։ Լավ էր սովորում, երազում էր... Բուրբ էլ երազում էին...



ԳԵՎՈՐԳ ՄԻՍԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ողբերգական մահով էլ շրջվեց Գևորգի կենսադրությունը։ Նրան հողին հանձնեցին միայն երկրաշարժից 5 ամիս հետո, գտան կահույքի ֆարքի կայի փլատակների տակից։ Այնտեղ էր աշխատում։ Սիրում ու հարգում էին 29 տարեկան աշխատանք բանվորին, որը միշտ լավ խոսք, բարի ծախս ուներ յուրաքանչյուրի համար։

ԽՈՍՔ ՑԱՎԻ ՈՒ ԱՌՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ



ՄԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

**ԳՈՀԱՐ ԱՎԵՏԻՔԻ
ԳՐԻԳՈՐԵԱՆ**

Ծնվել է 1936 թ. Ալեքսանդրի շրջանի Կամո գյուղում: Աշխատել է Կոմսոլի քաղաքային ծննդատանը, որպես մանկաբարձուհի, Երկրաչափի ժամանակ գործել է ծննդատանը, այդպես էլ չի մասնավորապես կորուստը այդ նույն բժշկության արհմիութիւնը:

**ՄԱՍԻԿՈՆ ՎԱՆՑԱՑԻ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Ծնվել է Կոմսոլում, 1962-ին: Ավարտել է № 20 դպրոցի 10-րդ դասարանը: 1980-ին ընդունվել է պոլիտեխնիկական ինստիտուտը: Մեկ տարի անց ծառայել է խորհրդային բանակում: Բուժն ավարտել է 1987-ին և աշխատանքի անցել կարի № 2 արտադրական միավորումում: ԼԿԵՄ կոմիտեի քարտուղարի տեղակալն էր: Այդտեղ գործ գնաց ձեռնարկությունում:

ՌՈՒՋԱՆԱ ԱՐՏՈՒՑԻ ՄԻԼԻՏՏՈՅԱՆ

1966 թվականի հոկտեմբերի 23-ին է ծնվել, սովորել և ավարտել է Մկրտիչ Արմենի անվան № 84 դպրոցը: Ունեցել է ստեղծագործական միտք, հանձնարարված գործի նկատմամբ հանդես բերել պատասխանատու վերաբերմունք: Չկարողանալով բուն ընդունվել, նա աշխատանքի անցավ Չկալովի անվան կարի արտադրական միավորումում: Կատարել է կոմերիտական հասարակական հանձնարարություններ: Դեկտեմբերյան աղետը չթողնեց իրականացնել իր ձեռքն ու ցանկությունները:



ԿԱՐԻՆԵ ԵՎ ԼՈՒՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆԵՐ

Կարինե Ռաֆիկի Մարտիրոսյանը ծնվել է 1958 թվականի հոկտեմբերի 4-ին:

Կարինե միջնակարգ կրթությունն ստացել է № 27 դպրոցում: Աշխատում էր պե-

տական պատկերասրահի Կոմսոլի մասնաճյուղում: Ամբողջ հոգով նվիրված էր իր ընտանիքին, սիրատուն իր զավակներին: Երկրաչափի օրը եղծել է տանը՝ «Եռանկյունի» թանգամատում իր երկու դուստրերի՝ 1,5 տարեկան Աննայի և Լիանայի հետ: Լիանան զոհվել է իր գրկում:

Լիանան պատրաստվում էր դպրոց հաճախել: Սիրում էր ընտանեկան ջերմ մթնոլորտը: Երազում էր ուսուցչուհի դառնալ: Կյանքի կարող էր աչքերին, զոհ գնաց...



ՍԱՆՈՍԵԱՆՆԵՐ

ՍՈՒՎԱՆՆԱՆ Վաղուց էր համոզվել տխուր ճակատագիրը: Աղջնակ էր, երբ զրկվեց ծնողներից և մայրական հոգատարությամբ ու գործով իր վրա վերցրեց անչափ փահաս քոչ ու եղբոր խնամքը: Աշխատանքի անցավ ճյուղեր արձակեց, լույս աչ-

կույրների միավորումում: Թըվում էր արդեն լուսավորվեցին: Ու ապրոյս էին, ու... երջանիկ էին, ու... տխուր վերնագրով աչք հեքիասը ավարտվեց աղետով: Հանգստություն ձեռք չիրիմներին, ամենը մահատակներ...

խարն եկան ՎՈՒՐԻՅԱՆ (1987), ՎԱՀԱՆԻՎԸ (1988), որը չհասցրեց անգամ լուսանկարվել: Ու ապրոյս էին, ու... երջանիկ էին, ու... տխուր վերնագրով աչք հեքիասը ավարտվեց աղետով: Հանգստություն ձեռք չիրիմներին, ամենը մահատակներ...

Մեր շուրթերից հնչող ամեն բան ցավի ճիչ է, ներսում զայված ամեն զգացում՝ ինքնատանջ տվալանք է, և արդեն ոչ է հավատադերսանքով նայել երկինք, թե՛ «Տեր մի տար գնե՛ղ ի փորձություն»: Ես, որ հավատացել եմ աստծո գթությանը, հիմա պարտադրված եմ խոստովանել. մեր երկինքում ոչ արդար ուժ կա, ոչ լուսավոր խիղճ, մեր երկինքը դատարկ, դատարկ է, հարազատներս: Բիրիական այս մի բուն հողի վրա մենք ենք ու մեր անընդհատ նորոգվող տառապանքը: Ու երկուսս էլ կոչվող այս զարմուրդի պատիժը՝ բազմաբանակ մահերով ու վիրավորներով, զանգվածային փրկումներով: Ես վրա հասալ մեր ամենաընթացի վրա պահին, երբ հոգու վիրավորանքից տնքալով մտածում էինք, թե ինչպե՛ս, որ տեղ տեղավորենք իրենց բռնակալայրերը թողած տասնյակ հազարավոր մեր հարազատներին: Վրա հասալ ամալոր դաժանությամբ մեզ ազգովի դարձնելով սգո տառապալի թափոր...

Այս ծանր, չարագանց ծանր ու ողբերգական ժամին մեզ օգնության շատ ձեռքեր են պարզված, բայց մենք ենք մեր ցավի տեղը: Դիտի գրքանք ու միջոցառում, սիրենք ու ազավինենք իրար, օգնենք միմյանց՝ պահպանելու ազգային մեր հպարտ ոգու առնականությունը: Ժողովրդական — ազատագրական շարժման հերոսական օրերին կար սրի հարվածի պես շառաչում մի կարգախոս: «Ով զարկի, դավաճան է»: Մեր այս դժվար, ճակատագրական պահին թույլ տվեք այն փոքր-ինչ վերափոխել. «Ով հուսահատվի, դավաճան է»: Այո, տվե՛ք ժամանակում մեզ մի ամեն մեկի հուսահատությունը հոգեկան ինքնապատկանություն է: Դարտալոր ենք ատաններս սեղան, վշտի ծանրությունից գլխահակ, արցունքներով հուղարկավորել գոհերին և ձեռնամուխ լինել վիրավորների օգնությանը, փրկված տների վերականգնումը, բազմահազար գաղթականների ճակատագրին: Դարտալոր ենք չփշրվելով, արժանապատվորեն գոյատևել, իրավունք չունենք մոռանալու, որ ազգի ուժը բոլոր առանձին հայերիս ֆիզիկական ու բարոյական բարձր հատկանիշների միասնացումն է: Համարենք, թե մեր ճակատագիրը մեզմից յուրաքանչյուրի մեջ մի Հոր է բնակեցրել ու դիմանալը: Մենք տեսնում ենք արյուն հանձնողների անզիջում հերթեր և մեր արցունքոտ աչքերում ազգային հպարտության լույս է ցլուտ: Վստահ եմ, որ պետական-կառավարական ձեռնարկումներից բացի, ժողովուրդն իրեն հատուկ սրտացավ կազմակերպվածությամբ ուղի վկանագրի ամեն ինչով օգնելու տուժյալ մարդկանց ու բնակավայրերին: Այո, պատիվ է այսպիսի ժողովրդի զավակ լինել:

Հայոց մեր երկինքը դատարկ է՝ առանց արդար ուժի և լուսավոր խիղճի: Բայց փոխարենը մենք ենք լցված գործող վճռակառույցներ: Երկնային ինչ պիտի զանգեր հարվից մի կերպ Երևան հասած ծանոթս՝ տեղեկանալու, թե գրողների միությունն ինչ է՝ մտածում գաղթականի իրենց վիճակի մասին: Զգանա՞ցե՛ք: Երկի ամաչեց, չհամարձակվեց ինքն էլ իր հոգսով ներկայանալ: Եթե ինչպե՛ս, պիտի ասե՛ք՝ բազում աղետներ տեսած մեր ժողովուրդն այս մեծ ցավի մեջ էլ չի կորցրել գույնը, չի մոռանա նաև իր հազարավոր արյունակիցների ողբերգական վիճակը: Մենք, հավանաբար, նորանց տեղավորելու համար պիտի զանգվածային բնակարանաշինություն սկսե՛ինք՝ կառուցողների կամավորական ջոկատներով, ամբողջ շահվորական ուժը, տեխնիկական և նյութերը տրամադրելով բնակարանների կառուցմանը, հասնելով նրան, որ ուսանողական շինությունները սկսե՛նք կառուցել: Ինչպե՛ս, որ գոտիներ մեկ մեկ փոխարեն աշխատանքային բնություն հանձնեն Հայաստանում: Բայց եղալ մեծ աղետը և հիմա երկու ծանր հոգս միաժամանակ ենք սկսելու փարատել: Կանենք, ես վստահ եմ: Մեր փրկված շենքերը կրկին կբարձրանան, ինչպես Ամարասի վանքը, որն ավերել էին, որմնաքարերը լցրել Արաքսը, բայց հաջորդ լուսաբացին դարձյալ հատնեց իր սունկան շքեղությամբ: Հուսահատվող չափով լինի: Տիգրան Մանուկյանը պիտի շարունակի ստեղծագործել պեմնելի մեղեդիները: Հրանտ Մաթևոսյանը չի կարող թողնել համաշխարհային արժեքների հետ չափվող իր գրականությունը: Գրիգոր Գորգադյանը առաջին պես պիտի բնի տիեզերքի առեղծվածային գաղտնիքները: Իհարկե, խորացված ցավով, բայց պիտի շարունակվի Հայաստանի ու հայ ժողովրդի ստեղծագործ կյանքը: Այս ճակատագրական օրերը մենք պիտի հիշենք ու ժամանակ անց երեխաներին պատմենք, թե ինչն ինչպես եղավ: Դարտալոր ենք հիմա այնպես անել, որ հետագայի մեր այդ պատմության մեջ ազգային ոգու, ստասպե լական ուժը դողանցի՝ ինչպես եղել է մեզմից դարեր առաջ, ինչպես լինելու է մեզմից դարեր հետո:

Մեր պատմությամբ աշխարհին մեր տվածով մենք վաղուց նվաճել ենք հավերժ գոյատևելու իրավունքը և այն մեզմից չի կարող խլել ոչ մի բարբարոս, ոչ մի սխալոր պատիժ: Ծարունակներ ապրել և վերստին ապացուցենք, որ հայ ժողովրդի ոգու մեջ փյունիկյան թույուն է բնավորված: Ապրենք ու արքայենք հավիտյանս հավիտենից: Ամեն:

ԻԳՆԱՏ ՄԱՐՅԱՆ
«Գրական թերթ», դեկտեմբեր 1988 թ.

ՏԻԳՐԱՆ ԱՏԵՈՂԱԹԻ ԽԱՂԱՏՐՅԱՆ



Ծնվել է 1962-ին, մեկն էր այն հինգ անձնող զոհերից, որոնց ընտանիքի հայրը՝ Ստյոպան փնտրում էր գիշեր ու ցերեկ: Հինգերորդ օրը գտավ բոլորին ու հանձնեց հողին: Սիրտը չտարավ այդ վիշտը, ինքն էլ նախատակվեց:

(«Հիշողության» № 11-ում Տիգրանի լուսանկարի փոխարեն սխալմամբ ուրիշինն է տպագրվել: Գուցե սա՝ էլ նախատարի հեղձանք է...»):



ՌՈՒԲԵՆ ԱՐԱՄԻ

ՄԵԾԱՏՈՒՆՅԱՆ

Ծնվել էր 1952 թվականին, Լեհիստանում: Ավարտելով միջնակարգ դպրոցը, Ռուբենն իր ուսումը շարունակեց Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանում, որից հետո զորակոչվեց խորհրդային բանակ: Բանակից վերադառնալուց հետո, նա աշխատանքի անցավ Լեհիստանի

հոկող հաստոցների գործարանում, սկզբնական շրջանում որպես մատակարարման բաժնի տնտեսագետ: Այնուհետև տեղափոխվեց ղեկավարությունը ծանոթանալով նրա աշխատանքային ունակություններին, Ռուբենին նշանակեց նույն գործարանի մատակարարման բաժնի պետ: 1977 թվականից մինչև ղեկավարելու լիազորված երկրաշարժը Ռուբենն սշխատում էր նույն գործարանում, վայելելով շքանշանների և մեդալների:

Ծանր վիշտ էր Ռուբենի կորուստը նրա թոշակատու հոր համար:

Ռուբենը միշտ նվիրված հայր է եղել իր երեխաներին և ընտանիքին:

Աղետալի երկրաշարժը, ավաղ, վաղաժամ կտրեց նրա կյանքի թելը՝ վշտահար թողնելով կնոջը և երկու որրուկներին:

ԸՆԿԵՐՈՋՆ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Չեմ ուզում հավատալ, որ գրում եմ թո մասին, իմ մակույթյան ընկեր, գուցե ընկերներիցս ամենաբանկ ու հարազատ, անցյալ ժամանակով: Եղել եմ պահեր, երբ ուզեցի եմ կտրվել գորշ կյանքի իրականությունից, մի պահ ամեն ինչ մոռանալ, այդ դեպքում եկել եմ թո շիրմին, երկար ու անշարժ կանգնել, նայելով թո մի փոքր հեղձանակ ու ինձ համար այնքան հարազատ ծպտից, որը կարծես կենդանություն է հարդորում գորշ ու փայլուն քարի կտորին, Բո քարին, բեզանից միակ վկա հուշը կյանքի հետ կապող...:

ՄԻՇԱ ԼԵՎՈՆԻ ԹՈՐՈՍՅԱՆԸ ծնվել է 1981 թվականին Լեհիստանում: Գեղարանի գնահատականներով ավարտել է № 14 միջնակարգ դպրոցը, գնացել Բաղնույու ուսումը շարունակելու: Ընդունվելով տեղի մանկավարժական ինստիտուտը,

ավարտել է գեղարանագրության ու մնացել Բաղնույուում աշխատելու, սկզբում որպես կոմերիտական շրջկոմի հրահանգիչ, ապա՝ քարտուղար: Բաց հարազատ քաղաքը ձգում էր Միշային: Կարոտով լեցուն համակներ էր հղում մորը, հարազատներին, ընկերներին: Սիրտը չդիմացավ, վերադարձավ հայրենի քաղաք: Աշխատանքի անցավ ՀԼԿԵՄ Թիթուկի շքանշանով, որպես հրահանգիչ: Աշխատեց խոհի մտքը: Բոլորի համար սիրելի՝ «ընկեր թորոսյան» էր:

Չարաբատակ աղետից երեք ամիս առաջ նա գնաց № 10 դպրոցում դասախոսելու: Նոր կոլեկտիվը սիրեց նրան, հավատաց մեր սերունդի գավակին, տեսնելով նրա անշահախնդիր ու նվիրված աշխատանքը մատաղ սերնդի հետ:

Չարագույժ ցնցումների ա...



ուաջին իսկ սրտից Միշան նետվեց այնտեղ, որ տարրական դասարանցիներն էին: Մի քանիսին փրկեց, հասցրեց դուրս բերել, սակայն ցնցումները գնաղով ուժեղանում էին, իսկ վերջինս, ամեն ինչ մոռացած ու փոքրիկների սրտանման աղաղակներից խեղճացած մորից նետվեց դպրոցի շենք ու... պատը շուտ եկավ նրա վրա:

ՍԱՄՎԵԼ ԱՂԱՆՅԱՆ



ՍԻՎԼԱ ԱՏԵՓԱՆԻ ՄՏԵՓԱՆՅԱՆ

Ավարտել է № 17 դպրոցը, սովորել է թեթև արդյունաբերության տեխնիկումում, սուպա աշխատել № 2 կարի սրտադրական միսլոթումում:

Համեստ էր Սիվլան, ճշտասպան: Դեկտեմբերի 15-ին մի երիտասարդ իր հարազատների հետ պետք է նը-

րանց տուն գար՝ Սիվլային նշան դնելու համար: Այանքում, թեթև, առաջին ու, ավաղ, վերջին անգամ ճշտասպան չեղավ Սիվլան, չկարողացավ բախտավորություն խուտացող այդ հանդիպումը: Ի՞նչ աներ, ինչպես սատմ են, իր ձեռքը չէր...



Լեհիստանի նոր գերեզմանատանը:

Լուսանկարը՝ Վ. Կոտովի

ՀՈՒՄԱՆԻՏԱՐԻ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԿՈՒՄԲ ԿՈՒՄԱՅԻՆԻ ԶԱՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ԻՄԱՅՈՒՅԱՆ Փ. 47